



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60) 71-00-78, (+374 60) 71-00-79, int.rel@ysu.am, www.yasu.am

№ 169 «__28__» __12__ 2017 թ.

Արձանագրություն N 169

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2017թ-ի դեկտեմբերի 28-ի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 28 (քսանութ) անդամներից 20-ը:

Օրակարգ

1. ԵՊՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգը սահմանելու մասին հարցը /զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
2. Դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
3. Թեկնածուական ատենախոսության թեմաների և գիտական ղեկավարի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
4. Գիտական և գիտամեթոդական աշխատությունների հրատարակության երաշխավորության հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
5. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ԵՊՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման նոր կարգը սահմանելու մասին հարցը:
2. Հաստատել ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի դոցենտ, պ.գ.թ. Ա. Հովհաննիսյանի դոկտորական ատենախոսության թեման՝ **«Պաղեստինյան հակամարտության կարգավորման տարբերակները տարածաշրջանային ուժային կենտրոնների ռազմավարության համատեքստում»** վերնագրով:
3. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեմաները.
ա/ ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի հայցորդ Լ. Հայրապետյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ **«Ցեղասպանությունների հիմնախնդիրը աշխարհաքաղաքական շահերի իրականացման համատեքստում»**,

ԻԳ.00.01 «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Ենգոյանին:

բ/ ՀՌՀ հայցորդ Գայանե Սուլախյանի «**Եվրասիական ինտեգրացիոն գործընթացների էվոլյուցիան հետխորհրդային տարածքում**» ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Ենգոյանին:

4. Երաշխավորել հրատարակության՝

ա/ ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի ասիստենտ Ն. Մկրտչյանի «**ԱՄՆ աջակցությունը Հայաստանի և Վրաստանի ժողովրդավարացմանը**» վերնագրով աշխատությունը և մասնագիտական խմբագիր նշանակել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, պրոֆ. Գ. Քեռյանին:

բ/ Հանրային կառավարման ամբիոնի դոցենտ ք.գ.թ. Է. Քալանթարյանի և նույն ամբիոնի դասախոս Կ. Ալթունյանի համահեղինակությամբ «**Հանրային կառավարման տեսություն (մաս 2)**» ուսումնամեթոդական ուղեցույցն ու դասընթացի ծրագիրը:

գ/ Հանրային կառավարման ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Ս. Մանուկյանի «**Հանրային (համայնքային) ծառայության իրավական կարգավորումը ՀՀ-ում**» ուսումնական ձեռնարկը:

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Գ. Պետրոսյան

Խորհրդի քարտուղար, դոցենտ

Ա. Իսրայելյան

Իսկականի հետ ճիշտ է՝